# ԿԱՆՈՆ

## ՇԱՐԱԿԱՆՔ ՆԱԽԱՏՕՆԱԿԱՑ

## ՍՐԲՈՑ ԾՆՆԴԵԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՑԻՆ

Օրհնեցուք․ Դկ․

Խորհուրդ մե՛ծ և սքանչելի՛ որ յայսմ աւուր յայտնեցաւ,․
Հովիւքն երգեն ընդ հրե՛շտակս, տա՛ն աւետիս աշխարհի։
Ծնաւ նոր արքա՛յ ի Բե՛թղեհէմ քա-ղաքի·
Որդիք մարդկան օրհնեցէ՛ք, զի վա՞ն մեր մարմնացաւ։
Անբաւելին երկնի և երկրի՛ ի խանձա-րուրս պատեցաւ․
Ոչ մեկնելով ի Հօրէ՛ ի սուրբ այ-րին բազմեցաւ։
Այսօր ցըն՝ վի՛ձ[illegible]րկինք ի վե՛րնուստ մե-ծա՛պա՛ արքամամբ եզք·

Եւ արարածք ամենայն զգեցան
հանդերձ փրկութեան։
Այսօր յայրին ընծայեցաւ Քրիստոս
Որդին Աստուծոյ.
Եւ հրեղինաց բազմութիւնքն,
յերկնից յերկիր վայր իջեալ։
Այսօր հովուացն տեսեալ զարդա-
րութեան արեգակն.
Եւ ընդ հրեշտակս երգէին փառք
ի բարձունս Աստուծոյ։
Ի Հօրէ ծագեցար լուսաւորել զարա-
րածս.
Արդարութեան արեգակն տէր
փառք քեզ։
Ծնար ի յայրին ընծայեցաւ Բեթ-
ղեհէմ.
Արդարութեան արե՛՛։
Հովուաց յայտնեցար երկրպագեալդ
ի մոգուց.
Արդարութեան արե՛՛։
Եւ մեք երգեսցուք որ ի կուսէն մարմ-
նացար.
Արդարութեան

Այսօր բանն ի հօրէ անմեկնելի՛ և
անճառելի խորհրդով, ի ձե՛ռն կուսա-
կան որովայնի տնօրինաբար յերկրի
երեւեալ։

Մանուկ անժամանակ ի հօրէ՛ անսերմն
ի կուսէ, ի գի՛րկս մօր գրգուեցաւ ա՛յ-
սօր արարի՛չն երկնի և երկրի։
Որ մաքրեացն ըզՅորդանա՛ն և լուաց
ըզմեղս աշխարհի, զոր օրհնե՛ն ան-
դադար արա՛րածք ամենա՛յն, զէակի-
ցըն Հօր և Հոգւոյն։

---

Աստուածածի՛ն սուրբ կոյս անապա-
կա՛ն տաճար, անպարագիծ էի՛ն բոլորից
բնութեանց լայնածաւալ տեղի. այսօր
ընդ բերկրական զուարթնոյն կրեցե՛ր
աւետեաց զտէրըն տերանց ի քեզ,
ա՛ռ որ մաղթեմք բարեխօսե՛լ վասըն
մեր ա՛նլըռելի ձայնիւ։
Ցիմանալի վտակաց տանն Աստուծոյ
հոսմանց. վիճակեալդ տեսանողա՛ցըն
ձայնի արբմամբ ըզմայլեցար, այսօր

զանթառամըն ծաղկեցա՛ր ըղձալիկ ի ժա՛մս տալով զպըտուղն. ա՛ռ որ մաղթեմք բարեխօսե՛լ վասն մեր անլըռելի ձայնիւ։

Այսօր ի քեզ լցեալ ամովլսածնին բարբառ, որ ի փրկութիւն հասարակաց տուեալ նըշան բնութեան ազգի մարդկան, ահա կոյս յըղասցի և ծնցի որդի զ՚ընդ մեզ յայտնեալն Աստուած. ա՛ռ որ մաղթեմք բարե՛”։

---

Ըղ.քեզ Աստուածածի՛ն, ա՛ղբիւր անըսպառ լուսոյն, որ լուսաւորէ զհաւատացեալս, միաբանական ձայնիւ երգով մեծացուցանեմք։

Դո՛ւ պարծանըք կուսութեա՞ն մա՛րդկան, դո՛ւ ուրախութի՛ւն հրեշտակաց, դո՛ւ բարձող անէծից, վասն որոյ ըղ.քեզ Աստուածածին մեծացուցա՛նեմք։

Դո՛ւ ճշմարիտ արեւելք արեգակնն արդարութեան, յորմէ ծագեա՛ց փըր-

կութիւն տիե՛զե՛րաց՝, միաբանական
ձայնիւ երգով մեծացո՞.ցա՞նեմք։

---

Աստուածածին և սրբո՛ւհի՛, որ ըզ-
բա՛նն Աստուած անսերմն յըղո՛ւ-
թեամբ յարգանդի կրեցեր՝ անդադա՛ր
երգով մեծացո՛ւցանե՛մք։
Զքեզ մայր կուսութեան և յըղու-
թեա՜ն լուսոյ. և առագաստ անձա-
ռելոյ բնա՛կո՛ղին, ի քեզ փեսայաց-
եալ բանին. անդա″։
Քե՛ւ լո՛ւծան կնիք դատապա՛րտո՛ւ-
թեանն, և՛ քե՛ւ կանգնեցաւ մեղուց-
եալ մա՛յրըն գլորեալ. վասն որոյ ըզ-
քեզ Աստուածածին և կոյս. անդա″։

---

Միայնոյ քեզ ի կանա՛յս կոյս յետ
ծննդեան երգեմք զօրհնո՛ւթիւն, զի՛
լոյս ի լուսոյ քե՛ւ յայտնեցա՛ւ աշխար-
հի. և զնախամօրն եբա՛րձ զանէ՛ծս
ա՛նձա՛ռ ծննդեամբն ի քէն։
Քեզ միայնո՛յ մարմնացելոյդ ի՛ սուրբ

կուսէն. օրհնութիւն ի բարձունըս
վեր երգե՛մք ասելով. փառըք քե՛զ
Քրի՛ստոս. որ եկիր կամաւ նոր կե-
ցուցանել ըզմեզ։

---

Խնդա Մարիամ, որ եղեր մա՛յր Քը-
րիստոսի, և աղաչե՛ա զնա ի քէն ըզ-
մարմնացեալ բանն Աստուած, զի
փրկեսցէ ըզմեզ ի փորձութենէ։

### Հոգեգալուստ

Հոգիք հրեղինացն, այսօր տօնեն ընդ
մեզ ըզգալուստ, Հոգւոյն Աստուծոյ։
Տեսանողն յառաջ. նըշանակէր զառա-
տաբուղխ վըտակ իմա՛ստից ի մեզ
հեղեալ ի Հոգւոյն։
Վէմըն հաւատոյ, զմայլեալ անմա-
հական բաժակաւն այսօր բաշխէր
ծարաւեաց։
Գետոցս այս գնացիւք, ցընծայ քաղա-
քըն Աստուծոյ Սիօն մայր եկեղեցի։
Վասն որոյ և մեք երրեակ և մի

Աստուածութեան երգեմք ըզփառս
ի բարձունս ։

---

Որ ի Հօրէ առաքեցա՛ր, մարդասէր
կարող փրկիչ և զմեղուցեալ զմարդըն
բըժըշկեցեր, ողորմեա տէ՛ր հրաժա-
րելոյս, զոր հրաւիրեալ առ քեզ կո-
չեցեր ։
Որ ի խաչին բեւեռեցար, մարդասէր
կարող փրկիչ, և ըզյող անապական
արեանըդ ցօղեցեր տիեզերաց· ողոր-
մեա տէր հրա″ ։
Որ զդժոխս աւերեցեր, և զգերեալըն
փրկեցեր և զարգելեալըն վերածեր
ի յոյս կենացըն յաւիտենից, ողորմեա
տէր հրա″ ։

Փառք Հօր․ Այժմ և Միշտ ։

Եւ մեք երգեսցուք որ ի կուսէն մարմ-
նացար, արդարութեան արեգակն տէր
փառըք քեզ ։

## Քարոզ․ դկ․ բկ․

Եւ եւս խաղաղութեան ըզտէր աղաչեսցուք։
Տէր ողորմեա
Վասն ի վերուստ խաղաղութեան և փրկութեան՝ անձանց մերոց զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։
Վասն լսելի լինելոյ տեառն Աստուծոյ՝ ձայնի աղաչանաց մերոց զտէր աղա″։
Վասն քաւիչ և ներող լինելոյ Աստուծոյ՝ ի վերայ մեղաց մերոց զտէր աղա″
Վասն Թողլոյ մեզ զամենայն յանցանըս մեր՝ ըզկամայ և զակամայ զտէր աղա″
Վասն զի մի ընդ խոտանման գտանիցեմք յաւուրն պատասխանատուութեան զտէր աղա″
Վասն հոգւոցն հանգուցելոց, որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին զտէր աղաչեսցուք։ Յիշեա տէր և ողորմեա։
Եւ եւս միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ զտէր աղա″
Զանձինս մեր և զմիմեանս տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք։ Քեզ տեառնըդ յանձն եղիցուք։
Ողորմեաց մեզ տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։ Տէր ողորմեա։(Եբէց․ եէնէ)։

## Քարոզ․ Ա.Զ․ Գ.Զ․

Վասն ի գիշերի և ի տուընջեան, և յամենայն ժամու խօսիլ մեզ ըզբան տեառն զտէր աղաչեսցուք․ Տէր ողորմեա․
վասն չանկանելոյ մեզ ի փորձութիւն, որում ոչ կարեմք հանդուրժել զտէր աղա՛։
վասն անբիծ և անդատապարտ կալ մեզ՝ առաջի ահեղ ատենին Քրիստոսի զտէր աղա″։
վասն առաջնորդելոյ մեզ՝ ի նաւահանգիստըն կենաց անվախճանից զտէր աղա″։
վասն արժանի լինելոյ մեզ՝ վերին կոչմանն և երկնից արքայութեանն զտէր աղա″։
վասն հոգւոցն հանգուցե″, Յիշեա տէր և ողոր″։
Եւ ևս միաբան, Զանձինս մեր․ Ողորմեաց մեզ տէր Աստուած․ Տէր ողորմեա․

## Քարոզ․ Ա.Կ․ Գ.Կ․

Վասն ուղղելոյ զգնացս մեր՝ ի ճանապարհս խաղաղութեան զտէր աղաչեսցուք․ Տէր ողորմեա․
վասն ցրելոյ ի մէնջ զամենայն խորհուրդս չարին զտէր աղա″։
վասն պարգևելոյ մեզ՝ առողջ խորհուրդս և առաքինի վարս զտէր աղա″
վասն պահելոյ ըզմեզ՝ ընդ հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ զտէր աղա″
վասն խորտակելոյ զհակառակորդն, փաղփաղակի ընդ ոտիւք մերովք զտէր աղա″

Վասն հոգւոյն հանգուցելոց՝ որք ճշմարիտ և ու-
ղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին զտէր աղաչես-
ցուք։ Յիշեա տէր և ողորմեա
Եւ ևս միաբան վասն ճշմարիտ և։ Զանձինս մեր։
Ողորմեաց մեզ տէր Աստուած։

## Քարոզ. ԲՁ. ԴՁ.

Վասն գտանելոյ մեզ՝ գշնորհս եւ զողորմութիւն
ի բարերար տեառնէ մերմէ զտէր աղա"։ Տէր ողո"։
Վասն փրկելոյ ըզմեզ՝ ի զրպարտութենէ մարդկան
և յորոգայթից սատանայի զտէր աղա"
Վասն ամենայն անձանց քրի՛ստոնէից՝ և տանց հա-
ւատացելոց զտէր աղա"։
Վասն որք ի լերինս յայս և ի փապարս՝ բնակեալ
են սուրբ հարքն մեր զտէր աղա"։
Վասն որք սաղմոսիւք և օրհնութեամբ կատարեն
զամենայն ժամանակս կենաց իւրեանց զտէր աղա"։
Վասն հոգւոցն հանգուցելոց որք ճշմարիտ և ու-
ղիղ հաւատով՝ ի Քրիստոս ննջեցին զտէր աղա՛։
Եւ ևս միաբան։ Զանձինս մեր։ Ողորմեաց մեզ։

---

## Ալէլուի

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա.

Եցոյց տէր ըզփրկութիւն իւր, առաջի ազգաց
յայտնեաց զարդարութիւն իւր։

Յիշեաց ողորմութեամբ իւրով զՅակոբ, ճշմարտութեամբ իւրով զտունն Իսրայելի, և տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա.

Յիշեա տէր զԴաւիթ. և զամենայն հեզութիւն նորա:

Որպէս երդուաւ տեառն, և ուխտս եդ Աստուծոյ Յակոբայ:

Փառք և երկրպագութիւն: Այժմ և միշտ: Ալէլ՛:

Դասք հրեշտակաց օրհնեն զքեզ Քրիստոս, ալէլուիա: Մարդկան ազգ սաղմոսեն քեզ, ալէ՛. ալէ՛:

---

## Հարց ԳՁ.

Անըսկիզբըն էակից բանըդ հօր, որ էիր յառաջ քան զյաւիտեանս, և եկիր ի փրկութիւն ստեղծուածոց քոց. ըզքեզ օրհնեմք Աստըւած հարցն մերոց: Ծընար ի կուսէ՝ անճառ միութիւն, անբաժանելի և միշտ գոլով ոչ մեկնեցար ի հայրական ծոցոյ, ըզքեզ օրհ: Ցընծութեամբ տօնեսցուք ըզծնունդ քո սուրբ, որ յայտնեցար մեզ լոյս

ի լուսոյ, և լուսով քո լցեր ըզտիեզե-
րըս. Ըզքեզ օրհ.

Գործըք տեառն ըզտէր օրհնեցէք, և
բարձր արարէք ըզնա յաւիտեան.

Երկինք տեառն ըզտէր օրհ.

Ըզծնեալն ի սրբոյ կուսէն օրհնեցէք,
և բարձր.

Փառք. Հօր. Այժմ և միշտ

Զանճառելի ըզծնունդ Փրկչին գովե-
ցէք, և առաւել բարձր արարէք ըզնա
յաւիտեան.

---

Մեծացուցէ. Գձ.

Ուրախ լեր Աստուածածին յոյս և
փրկութեան մայր՝ Ըզքեզ ընդունող
լուսոյ մեծացուցանեմք.

Ըզքեզ լուսոյ մայր և. կոյս՝ ըզքեզ
գանձըդ կենաց Աստուածային, ծայնիւ-
ցնծութեամբ. մեծա.

Փառք Հօր. Այժմ և միշտ.

Մայր սուրբ անարատ լուսոյն, հրեշ-

տակային օրհնութեամբ պատուեալ
ըզքեղ մեծացուցա։

Ողորմեա․ Գձ

Ամենիմաստ ամենից հայր բազմազեղ խնամող ստեղծող և տէր բոլորից, անեղ և էից էակ, զոր միշտ օրհնեն դասք անմարմնականաց յաւէրժաբար հը՛նչմամբ։

Որ կերպարան և կնիք հօր առեալ վասըն մեր ծառայի կերպ՝ ի կուսէն, որ էն ի յաթոռ փառաց անտես վերնոցն, ի յայրին իջեւանի և ի մսուր անբանից բազմեալ։

Փառք Հօր․ Այժմ և միշտ։

Ըզ ի կուսէն մարմնացեալ բանն եկայք ժողովուրդք ընդ հովիւսն բարեբանեսցուք, և ընդ մոգուցն երկրպագեսցուք, ընդ երկնային զօրսն երգե՛սցուք փառք ի բարձունս Աստուծոյ։

Օրհնեցէք. ԳՁ.

*Ճառագայթ և կերպարան էութեան Հօր բանդ Աստուած, ընդ քեզ բարեբանեմք ասելով փառք ի բարձունս Աստուծոյ:*

*Որ միացար ի մարմնի անճառապէս Ճշմարիտդ Աստուած. ընդ քեզ բարե:*

*Փառք Հօր. Այժմ և միշտ:*

*Որ զանիծիցըն բարձեր ընդդատապարտութիւն Քրիստոս Աստուած. ընդ քեզ բարե:*

Որթի. . . . . Եւ օրհնութիւն քեզ ի բարձ":

*Արեգակն արդարութեան այսօր յայտնեցար ազգի մարդկան:*
*Մարդ եղեալ սրբեցեր ընդ ջուրըս վերածընեալ ըզմեզ մըկրտութեամբըն սրբոյ Հոգւոյն:*
*Ի վայելչութիւն փառաց սրբութեան քոյ, ի յորգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ ընդ քեզ, մարդ եղեալ սըր:*

Թափուրէ ժամանակ ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ կամ ղայս ···

Այսօր զանճառելի ծնընդեան քո տէր
զըսպասաւոր խորհրդոյ, ի հողանիւթ
գոյացութեանց փոխադրեցեր ի յեր-
կինս։
Այսօր զանտանելի բանիդ բարձողն
ըղքերովբէն հողեղէն, բարձրացու-
ցեր 'ի ստորնոյնոցս գերակայիցըն
կայանս,
Այսօր զանապական կոյսն որ ըղքեզ
մաքուր կաթամբ կերակրեաց․ ի զգա-
յական փոխեալ բնութեանց յիմա-
նալեացն խորանս։

---

Այսօր տօն է ծննդեան աւետիս։
Տեառն մերոյ և յայտնութեան աւէ"։
Այսօր արեւն արդարութեան աւետիս,
Երեւեցաւ ի մէջ մարդկան աւետիս։
Այսօր սուրբ կոյսն անապական աւէ"։

Ծնաւ երբեր զանմահ արքայն աւետիս։
Այսօր հրեշտակք յերկնից իջան աւե՜՛.
Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն աւե՜՛.

---

## ՃԱՇՈՒ ԾՆՆԴԵԱՆ ՏԵԱՌՆ

Մեծացուցէ. Գ.Զ.

Սուրբ զԱստուածածինն, օրհնու
թեամբ մեծացուցանեմք։
Աւետաւոր հրեշտակն աւետարանէր,
ըղձնեալ Փրկիչն ի սրբոյ կուսէն։

Փառք Հօր. Այժմ և միշտ։

Ասէ ուրախ լեր բերկրեալդ. քանզի
Տէր տերանց է ընդ քեզ։

---

Ալէլուիա. ալէլուիա.

Այսօր ծնաւ որ ի Հօրէ յառաջ քան
զյաւիտեանս որդին, որ է օծեալ Տէր
ի քաղաքի Դաւթի, ի մայեղչութիւն
սրբոյ քոյ՝ յորդանդէ յառաջ քան
զարուսեակ ծընայ ըզքեզ։

## ԿԱՆՈՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ԴՁ.

Լոյս ի լուսոյ ի Հօրէ առաքեցար և մարմնացար ի սուրբ կուսէն, զի վե- րստին նորոգեսցես զապականեալն Ադամ։

Դու Աստուած ի յերկրի երեւեցար, և ընդ մարդկան շրջեցար. և փրկեցեր ըզտիեզերըս յանիծիցն Ադամայ։

Քեզ ի յերկնից վկայեալ Հօր քո ձայն, ասէ՝ դա է իմ որդի, և սուրբ Հո- գին ըզքեզ յայտնեաց աղաւնակերպ երեւմամբ։

Ալէլուիա. ալէլուիա։

Ուրախ եղիցին երկինք՝ և ցնծասցէ երկիր, զուարճասցի ծով լրիւ իւրով, ցնծասցեն դաշտք և ամենայն որ է ի նոսա։

Կենդանարար Աստուած մարդասէր Հոգի, ըզժողովեալըն միաբանական սի- րով լուսաւորեցեր հրեղինօք լեզուօք,

…ՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ…

վասն որոյ և մեք այսօր տօնեմք ըզգա-
լուստ քո սուրբ:

---

## Քարոզ

Ցամենայն ժամ օրհնեմք զօրհնեալ փրկիչդ Էմմանուէլ. ծընեալ ի կուսէն և վերստին ծննդեամբ. մըկրտեցար այսօր ի Յորդանան ի Յովհաննէ. Նորին բարեխօսութեամբ ընկալ զաղաչանս քոց պաշտօնէից. աղաչեմք:

Լուր տէր և ողորմեա:

Որ սրբեցեր ըզջուրսն Յորդանանու սրբիչդ աշխարհի. տալով ըզկնիք նորոգման որդւոց սիօնի տուր մաքրութիւն սուրբ Եկեղեցւոյ, և ազատութիւն քում ժողովրդեան. աղաչեմք:

Լուր տէր և ողորմեա:

Հեղցես Տէր ի մեզ ըզշնորհս հոգւոյդ զոր ընկալար տնօրէնութեամբ ի Յորդանան, զհոգի իմաստութեան գիտութեան և զօրութեան, զհոգի հանճա-

րոյ և խորհրդոյ Աստուածպաշտու-
թեան լցո ըզմեզ հոգւով երկիւղի
քոյ․ աղաչեմք ։

Լուր տէր և ողորմեա ։

Ի հաղբից թշնամւոյն պարսպեալ ամ-
րացո սուրբ զեկեղեցի, և յանուն քո
ժողովելոցս շնորհեա զքաւութիւն և
զթողութիւն, միածին որդի Աստուծոյ,
յիշեա զհոգիս ննջեցելոց մերոց և այց
արա ի քում գալստեանդ․ աղաչեմք ։

Յիշեա տէր և ողորմեա ։

Գոչմամբ Տիրուհւոյ իսկապէս մօր քոյ
և կուսի Մարիամու Աստուածածնին, և
հուպ եղելոյ քեզ հողանիւթ հրեշտա-
կին ի Յորդանան այսօր ըզքեզ ձեռ-
նադրողին, կրկին բացողին զերկինս
սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, և
հօրն մերոյ սրբոյն Գրիգորի լուսաւոր-
չին և ամենայն սրբոց քոց տէր որք յա-
ւիտենից քեզ հաճոյացան․ աղաչեմք ։
Տէր ողորմեա տէր ողորմեա լուր տէր
և ողորմեա ։

## Տաղ

Ո՜վ զարմանալի, խորհուրդս այս մեծ յայտնեալ, արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ։

Կամէր մկրտիլ, ի ծառայէն իւրմէ, չառնոյր Կարապետն, ըզմկրտելն ի յանձն։

Յորդանան լըւեալ փախստական դառնայր, վտակ առ վտակ, պատգամաւոր լինէր։

Գետ մի՛ զարհուրիր, քո արարիչն եմ ես, եկեալ մկրտիմ և լուանամ ըզմեղս։

Յիսուս յառաջեաց, աստուածութեամբըն ի ջուրն հանդերձ Յովհաննու Յիսուս ի գետն եմուտ։

---

Ամէն ալէլուիա ալէլուիա ա՛լէլուիա։

---

Առաքելոյ աղաւնոյ իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց, ի նմանութիւն լուսոյ փայլման հրացինեաց ան-

կիզելի զաշակերտսն, մինչդեռ նստէին ի սուրբ վերնատանն։

Աննիւթական աղաւնի, անքննելի որ քննէ զխորս Աստուծոյ, զոր առեալ ի Հօրէ պատմէ զահաւոր և զմիւսանգամ գալուստն, զոր քարոզեցին համագոյական։

Օրհնութիւն ի բարձունս, ելազին ի Հօրս Հոգւոյն սրբոյ, որով առաքեալքն արբեցան անմահական բաժակաւն, և հրաւիրեցին զերկինս ի յերկինս։

---

## ՃԱՇՈՒ ԾՆՆԴԵԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՑԻ

Մեծացուսցէ ԳԶ.

Զանճառելի լուսոյ Մայր, և ըզբնակարան անսկզբնակից Որդւոյն. օրհնութեամբ մեծացուցանեմք։

Զանհաս տնօրէնութեան Մայր, և զանձնաւոր տաճար աստուծոյ բանին օրհ"։

Փառք Հօր։ Այժմ և միշտ։

Զբոլորից փրկութեան Մայր, որ զանտանելի էից ի յարգանդի եբարձ,

ըզնա ամենեքեան օրհնութեամբ մեծացուցանեմք։

## ՋՐՕՐՀՆԵԱՑ

Այսօր ձայնն հայրական յերկնից իջեալ հաճոյական սիրեցելոյ որդւոյ վըկայ, այն յորդորէ գետ յորդորէ, գետ Յորդանան աւետաւոր ձայնիւ երգեր մեծ Կարապետն Յովհաննես։

## ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻՆ

Քրիստոս փառաց Թագաւոր այսօր եկեալ ընծայումն կատարելով նազօրէնս քառասնօրեայ գալըստեամբն։ Ի գիրկս առեալ ծերունւոյն զաստուածորդին և ասէր, մեծ աւետիս են յասօր տիեզերաց ամենից, մեծ աւետիս ն այսօր նահապետաց ամենից, մեծ

ս այսօր մարգարէից ամենից,
տիս են այսօր քահանայից
Նից, մեծ աւետիս են այսօր ժո-
ղովրդոց ամենից. այլ մեծագոյն աւե-
տիս Քրիստոնէից համայնից։



ՀԱՅԿ ՍՍ[illegible] ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0055930

ЦЕНА
А 1
15115